

ԱԶԱՏ ԽՕՍԿ

Տոմար 3

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901

ԲԱՐԻՉ

ՊՈԼՍՈՅ ԼՐԱԿՐՈՒԹԻՒՆԸ.

Ի՞նչ գանելիք բան, սա այսօրուան Պոլսոյ լրագրութիւնը :

Կը տեսնա՞ք կրթեք Արեւելքը, — ներկայացնենք : Պոլսոյ մէջ ցաւաւարներէ խմբագրուած օրաթերթ մըն է այսօր, որուն խմբագրապետը ըլլալ կը թուի Արամ Անտոնեան անուն անօրինակ, չըլլալիք իմաստակ մը, սահմանուած ապահովարար ամէն բան ըլլալու, դերձակի աշկերտ, սափրիչ, խանութպան, պայտար, բայց զոր աստուածները կրթեք գրականութեան համար չէին ստեղծած: Եւ սակայն ան կ'իրականացնէ այսօր սա անորակելի, աներեւակայելի, ցնորական անկարելիութիւնը, — կեղծ Զօպանեանի գրականութիւն մը :

Երազել տուող բան մըն է ասիկա: Կեղծին գրականութիւնը ունէինք, ունէինք Կեղծը յանգաւոր, դաշնակաւոր, թրթռուն, արչալուսային, ձայնաւոր, նոյն իսկ իմաստասիրական՝ խռովքովը Պակուցումին: Բայց այս թռուիկը Պոլսոյ մէջ, ուր Զօհրապէն զատ գրագէտ չէ մնացած, իր պզտիկ չփացած կապիկի վարնոց սիրունութեան մէջ՝ կը բերէ կեղծին կեղծը, բացարձակ, անխառն, տեսական գեղգեկութիւնը :

Զերարձակ շլփիկութեան, անգիտակից անհասկութեան ու ինքնագոծ թացիկութեան ի՞նչ համարական զաւեշտ մըն էր այն յօդուածը որ վերջերս Օրաթին տակ ինկաւ եւ որով այդ անյղանալի իմաստակը, թերթին առաջին էջին առաջին կրթեք սիւնակները գրուած, իր ցափոտութիւնները կը լորձնտէր Միքիաս Երապեան անուն խեղճ աղու մը վրայ որ կը լսենք թէ Մանչէսթըր վաճառականի մը քով գրագրութեամբ կը զբաղի: Ի՞նչ պէս ծիծաղելի ըրած էր այդ միամիտ տղան, զանիկա

անմիջապէս գրագէտ նուիրագործելով ու ըսելով անոր.
« Ստոր անկապտելի իրաւունքը ունիս, որովհետեւ ինծի
կը նմանի՛ս : » Միւսը հիմակ, որ իր քանի մը քրոնա-
ջանօրէն ու հակումներով իրարու քով բերուած անսնձ-
նական ու միջակ էջերէն ատոր կէտը չէր սպասեր հար-
կաւ, հիմակ անշուշտ կը զգայ իր ոտքերուն հողերէն
կտրիլը, վերանալը, տարուիլը, ա՛լ վար չիջնալու հա-
մար, լոյսի, փառքի, հեշտանքի եթերնորո՛ւն մէջ . . . :
Ու մտածել որ զեռ մարդիկ կան աշխարհիս վրայ որ
ժամանակ կը գտնեն ձանձրանալու, երբ այնչափ բան
կայ խնդացնող, ու . . . լացնող միանգամայն գուցէ :

Պ. ԼԱՄՍՏՈՐՅ ԵՒ Պ. ՉԵՐԱԶ.

Արդէն հազորդեցինք թէ Ռուսիոյ կայսեր Ֆրանսա
այցելութեանը առթիւ Պ. Չերազ Բարիզ մնալու ազգա-
յին պարտականութիւնը զգալով չէր ուզած վիսնտիկ
երթալ եւ իր ներկայութեամբը պատուել Միխիթարեան
Յոբելեանը : Երբաթափանց հեռատեսութիւն : Զարը
Գոմբէէյն հասնելուն, իր արտաքին գործոց նախարարը
անմիջապէս փափաք յայտնած է հայ ազգին պաշտօնա-
կան ներկայացուցչին հետ տեսակցութեան մը : Պ. Չե-
րազ զոհացում սուած է այս փափաքին՝ « Արդէն ես ալ
կը փափաքէի » յայտարարելով :

Նոյնութեամբ կ'արձանագրենք երկու զիւանապէտ-
ներուն տեսակցութիւնը, երաշխաւորելով ստուգու-
թիւնը :

ԼամստրՅ. Վեհափառ տէրս, Պ. Չերազ, այսօր իսկ
Հանրապետութեան Պ. Նախագահին հետ Հայկական
խնդրին նկատմամբ տեսակցութիւն մը պիտի փոխանա-
կէ : Պարտաւոր եմ կենսական կարեւորութիւն ունեցող
քանի մը տեղեկութիւններ հազորդել նորին Վեհափա-
ռութեան, առ ի զիւրութիւն բանակցութեանց : Չե-
րաբեացկամութեանը զիմելու կը պարտաւորուիմ :

Չերազ. Տրամադրութեանս ներքեւ էք, Պարոն նա-
խարար :

ԼամստրՅ. Կը հաճի՞ք, Պարոն Չերազ, ինծի յիշեցնել

Հայ ազգին կրած տառապանքներէն անեղագոյն մէկ քանի դէպքեր :

Չերազ. (Հատիկ հատիկ). Երբ Մեր Տնօրէնին տասնը մէկ տարուան չորսուկէս ամսուան եղբորորդեակը Լոնտոնէն Պոլիս վերադարձաւ, մայրը շոգեհաւ գնաց զաւկին ընդառաջ : Երբ տղուն ձեռքէն բռնելով կ'ուզէր դուրս հանել, ոստիկան մը հասնելով անցագիր պահանջեց, տղան վախցաւ ու լացա՛ւ : Մեր Տնօրէնը այս ոճերը ընդարձակօրէն նկարագրած է Արմենիին մէջ :

Երբ Մեր Տնօրէնին եղբայրը օր մը Ալալթա-Սարայի առջեւէն կ'անցնէր, էնվէր պէյը մէկէն ի մէկ պոռաց. « Գասպար էֆէնտի, սա եղբօրդ ըրածները կ'վայէ՞ : » Մեր Տնօրէնին եղբայրը լեղապատառ եղաւ : Եւ որովհետեւ Պոլիս փողոցները վաթէր-քօզէթ չի գտնուիր . . . հետեւանքը կրնաք մակարերել : Մեր Տնօրէնը այս տեղատարափը ընդարձակօրէն նկարագրած է Արմենիին մէջ :

Երբ Մեր Տնօրէնին մօրեղբայրը վախճանեցաւ, Մեր Տնօրէնին եղբայրն ու մայրը խոհեմութիւն համարեցին մահազդ չսպել . Մեր Տնօրէնին Մականուան յիշատակութիւնը կրնար աղետաբեր հետեւանքներ առաջ բերել Պոլսոյ Հայոց : Մեր Տնօրէնը իր Գերդաստանին այս ինքնադոհողութիւնը ընդարձակօրէն նկարագրած է Արմենիին մէջ :

Պ. Չերազ կանգ կ'առնէ :

Լախսոճ. (Ժպտուն). Ուրի՞շ :

Չերազ. Պերիի վեհաժողովէն մինչեւ այսօր իմ ժողովըդին կրած աղէտներուն էն անեղագոյնները փափաքեցաք իմանալ . ինչ որ պէտք էր յիշեցուցի :

Լախսոճ. Բայց լսած էի որ Հայոց արիւնը հեղեղի պէս վազած է, ու դեռ ալ կը վազէ : Սխա՞լ է :

Չերազ. Յետ Գրիստոսի խաչելութեան զայն Աստուած դաւանողներուն արիւնն ալ դարերով հեղեղի պէս վազեց, եւ սակայն այսօր Գրիստոնէայ ժողովուրդներուն համար Գրիստոսի արցունքին մէկ կաթիլը, Չիթհնեաց լեռը թափած քրտինքին մէկ ոլոռը աւելի թանկագին սրբութիւն մըն է քան թէ միլիոնաւոր քրիստոնէից արիւնին ովկիանոսը : Նոյնն է հայ ազգին համար, բաղդատմամբ իր թափած արիւնին, արցունքի մէկ կաթիլը զոր իր աչքէն կը թափէ Մեր Տնօրէնին

գերդաստանին մէկ անդամը : Ահա ինչու Մեր Տնօրէնը Արեւելիի սրճապահները նուիրած է իր անձին եւ իր գերդաստանին , ինչպէս Աւետարանը Կրիստոսի :

Լաւսսորճ. Դուք , Պարոն Չերազ , որ խորապէս կը ճանչնաք Թիւրքիան , ու Սուլթանին հոգեբանութեանը թափանցած էք , կրնա՞ք մեզի թելադրել կարուկ միջոց մը որուն շնորհիւ հնարաւոր ըլլայ , առանց եւրոպական մեծ խառնակութեանց վտանգի , Հայաստանի վիճակը բարեփոխել :

Չերազ. Պէտք է Սուլթանը ահաբեկել :

Լաւսսորճ. Միջոցը :

Չերազ. Պարզ է : Եւրոպայի զիւանագիտութիւնը Սուլթանը ահաբեկելու միակ ապահով երաշխաւորութիւնը Մեր Տնօրէնին անձին մէջ պէտք է փնտռէ :

Լաւսսորճ. Հետեւաբար կ'առաջարկէ՞ք . . .

Չերազ. Հետեւաբար կ'առաջարկեմ որ Ռուսիոյ վեհափառ կայսրը , Յրանսայի Հանրապետութեան նախագահը եւ Մեր Տնօրէնը գլուխ գլխի առանձին տեսակցութիւն մը ունենան , եւ երեքը միասին ճաշեն մտերմաբար : Հեռագիրը այդ լուրը — բռէք գոյժը — Պոլիս տարած ըրպէէն Սուլթանը կա՛մ յանկարծամահ կ'ըլլայ , կա՛մ Հայկական ու Մակեդոնական ինդիւրները կը կարգադրուին , ու Թուպինիի եւ Լորանտոյի պարտքերն ալ կը վճարուին :

Լաւսսորճ. Բայց , Պարոն Չերազ , կ'անգրադառնամ թէ շարունակ Չեր Տնօրէնին անունին շուրջը կը դառնայ ամէն ինդիր : Օգտակարագոյն չէ՞ր արդեօք ուղղակի Չեր Պարոն Տնօրէնին հետ տեսակցութեան մը « պատեհութիւնը » ունենալ :

Չերազ (ձորհրդաւոր ժպիտով ձը) Պարոն նախարար , Չեզի անակնկալ մը կը պատրաստեմ . չեմ ուզեր սակայն որ յանկարծակիի գաք . անսպասելի ուրախութիւնները կրնան աղետաբեր հետեւանքներու յանգիլ : Ուրեմն պատրաստուեցէք :

Լաւսսորճ (ինդալով) . Պատրածո՞ւ եմ :

Չերազ. Լա՛ւ , գիտցէք ուրեմն , Պարոն նախարար , որ նոյն իսկ Մեր Տնօրէնին ներկայութեանը գտնուելու « պատի՛ւն ունիք » :

(Պ. Չերազ կը չեչտէ «պատի՛ւն»ին վրայ , իբր հակադրութիւն մը Պ. Լամատորֆի գործածած «պատեհութիւն» բացատրութեան)

ԼաւսոսոՅ (Անայլայլակ), ուրեմն, Պ. Չերազ, դուք
եւ Արվեհիի Պարոն տնօրէնը միեւնո՞յնն էք :

Չերազ (Խնդալով). Մի անձն եւ մի բնութիւն : Եւ
ասով կը հերքուի իմ ժողովրդիս դէմ Եւտիքականու-
թեան ամբաստանութիւնը :

ԼաւսոսոՅ. Ուրեմն Չեր Տնօրէնը եւ Դուք էիք 1879ին
Պերլինի Վեհաժողովին ներկայացողը: Շատ երիտասարդ
էիք այն ժամանակ, Պարոն Չերազ : Բասներկու տար-
ուան մէջ փորձառութեամբ շատ հասունցած էք :

Չերազ (առանց անդրադարձնալու հեղնութեանը). Պա-
րոն Նախարար, ազրջ եաշսա ճեյիլ պաշսա սրբ, կ'ըսեն
թիւրքերը . (ու կը թարգմանէ ֆրանսերէնի) :

ԼաւսոսոՅ. Եւ միշտ Դո՞ւք էք Հայ ազգը Եւրոպայի
առջեւ միայնակ ներկայացնողը :

Չերազ (Չայրոյթով). Զօպանեանը ո՛ր եւ է պաշտօն
չունի :

ԼաւսոսոՅ. Ինձի միշտ մութ մնացած էր թէ Հայ
դատը ինչո՞ւ Եւրոպայի առջեւ պէտք եղած յաջողու-
թիւնը չէր գտներ: Ձեզ հետ տեսակցութիւնս զիս լու-
սաբանեց: Այլ եւս ո՛ր եւ է կէտ մը մութին մէջ չի մնար,
քանի որ Հայ ցեղին փաստաբանը Դուք էք: Գոհ եմ
ամէն բանի տեղեկանալուս :

Չերազ. Գոհ եմ եւ ես որ զՁեզ լուսաբանելով իմ
ժողովրդիս նոր բարիք մը եւս կ'ընեմ: Կը սպասեմ ուրեմն
մեր երեքին տեսակցութեանը եւ ճաշկերոյթին :

(Ունկնդրութիւնը կը վերջանայ ու Պ. Չերազ դեռ
կը սպասէ) :

ՔՐԷՇԷՆՏՕ.

Յորանայի Երեսփոխանական ժողովին բացման նախ-
ընթաց օրը Պ. Տէլքասէ նախարարաց խորհրդին տեղե-
կութիւններ հաղորդեր է թէ ի՛նչպէս առանց ֆրանսա-
կան նաւատորմը շարժման վիճակի մէջ դնելու, կը յու-
սայ ներգործել Սուլթանին վրայ : Ահա իր յայտարա-
րութիւնը .

— Կարմիր Սուլթանին անաբեկմանը համար, Հայկա-
կան ինդրին կարմիր ուրուականը կը բաւէ : Կը յառա-
ջանամ Իրեշկեսօ. Ձեռքի տակէ նախ Պ. Քիյարը հրաւի-

րեցի Դրօշակեան ծրագրով մը : Կը կարծէի թէ այդ երկու անունները, վայելելով իմ աջակցութիւնս , բաւական պիտի ըլլան Սուլթանին անձնատուութեանը : Մէկ քանի շաբթուան սպասումէ յետոյ տեսայ որ հարուածը իր ազդեցութիւնը ունեցած չէր , հարկ եղաւ յեղափոխական սպառնալիքէ յետոյ կրօնական եւ զիւանագիտական սպառնալիքներու զիմել . ուստի Բարիզի Հայոց քահանան եւ Պ. Չերազը ձեռքի տակէ հրաւիրուեցան գիմուսի մը :

Վալսէֆ-Ռուսօ (ընդմիջելով). Աւելի զբական արդիւնք մը կը յուսամք :

Տէլֆաւէ. Հաւանական է :

Վալսէֆ-Ռուսօ. « Հաւանական է » կ'ըսէք . բայց յուսախաբութիւն մըն ալ հաւանական է :

Տէլֆաւէ. Անտարակոյս : Բայց յայտարարեցի թէ ֆրէձենսօ կը բարձրանամ : Կերագոյն հատու զէնքը պահած եմ վերջին պահուն :

Վալսէֆ-Ռուսօ. Կրնա՞նք գիտնալ :

Տէլֆաւէ. Պետական գաղտնիք մըն է , բայց պաշտօնակիցներուս գաղտնապահութեանը վստահ եմ : Պ. Գիյարի, Դրօշակի, Հայր Գիպարեանի, Պ. Չերազի Գէտ'Օրսէ ապարդիւն այցելութիւններէն յետոյ , պիտի հրաւիրեմ (ձայնը ցածցնելով) Չօպանեանը :

Այս յայտնութեան վրայ բոլոր նախարարները ոտքի կ'ելլեն եւ Տէլքասէի ձեռքը ջերմապէս կը սղմեն , իրենց բոլոր տագնապներն ու անձկութիւնները փարատեալ զգալով :

ԳԵՂԵՏԻԿ ԼՈՒՐ ՄԸ.

Ուրախութեամբ կը լսենք թէ Մանչէսթրի մեծահարուստ վաճառականներէն Տիար Մարտիրոս Թօքսթեան իր հարստութենէն մաս մը , 20,000 անգլ. ոսկի , յատկացրեր է ազգօգուտ հիմնարկութիւններու : Եթէ մեր տեղեկութիւնները ստոյգ են , այդ գումարը պիտի գործածուի կրթական հաստատութեան մը ուր պիտի ընդունուին 50՞ չափ յաջողագոյն աշակերտներ թրքահայ զպրօցներէ : Այս հայ կրթարանը պիտի հաստատուի Անգլիոյ կամ Գերմանիոյ մէջ , ունենալով բարձրագոյն

երկրորդական վարժարանի ծրագիր մը, զոր աւարտելէ ետքը աշակերտները կարող պիտի ըլլան հետեւելու համալսարանի դասընթացքներուն, շարունակելով ապրիլ հայ կրթարանին մէջ՝ հոն դասախօսելով ստորին կարգերուն : Մասնաւոր խնամք պիտի տարուի տոհմային դաստիարակութեան, տոհմային լեզուի, գրականութեան ու պատմութեան ուսուցումին :

Ասանկ փառաւոր գաղափարի մը առջեւ, որուն իրականացումը կը խոստանայ մեզ Մանչէսթրի մեծահոգի վաճառականը, մեզի ուրիշ բան չի մնար աւելցնել եթէ ոչ մաղթել որ իր կենդանութեան իսկ կարենայ տեսնել իր վեհանձն ու գեղեցիկ յղացումին իրագործումը :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ.

Տեյի Մեյի անգլիական թերթին մէջ կը կարդանք թէ Ֆէրիտուն պէյի եւ Սինապեան Մըզլըբի տրամադրութեան տակ գործող վաթսուհի չափ լրտեսներուն մէջ, զորոնք ֆրանսական կառավարութիւնը դուրս վըռնոտեց իր երկրէն, կը գտնուի նաեւ քաջածանօթ սոքթոր Ռոպէնսոն : Պ. Մինաս Չերազ, սոքթոր Ռոպէնսոնի բարեկամը, իր թերթին մէջ կը գրէ թէ Տեյի Մեյի սխալած է վճնտուած լրտեսներուն մէջ դասելով սոքթոր Ռոպէնսոնը որ միշտ իբր թէ Բարիզ կը գտնուի եղբւր : Փափաքելի է որ ճիշդ ըլլար Պ. Չերազի հերքումը, — ասով գոնէ Հայ մը պակաս պիտի ըլլար աղտոտ գործի մը մէջ, — սակայն արժանահաւատ անձեր կ'ըսեն թէ Տեյի Մեյի լուրը յ'Արմենիի հերքումէն աւելի հաստատ է :

Տոքթոր Ռոպէնսոնէն կը սպասենք որոշ բացատրութիւն մը :

Թէ ԻնՉՈ՞Ւ ԿՌՈՒՆԵԼՈՒ ՉԵՐԹԱՐ ԿՈՐ.

Պ. Արշակ Չօպանեան՝ որ թէեւ Տէլքասէէն պաշտօնապէս չհրաւիրուեցաւ, բայց գիտենք որ ամէն օր կէս օրէն ետքը Քէ տ'Օռսէ կը հանդալի անգամ մը իր բարեկամին ձեռքը սեղմելու ու գիււանազիտական խրթին

հայրցերու մէջ իր հեղինակաւոր խորհուրդները տալու համար Ֆրանսայի Արտաքին Գործոց նախարարին, Անանիոսին վերջին թիւին մէջ յտակօրէն կը յայտարարէ թէ կռուելու համար ասկէ աւելի յարմար առիթ չէր ներկայացած ու կը կշտամբէ «Շարժում»ին, Ամերիկայի «Հայրենիք»ին, խմբագիրները որոնք հին սովորութիւն մը չաւրելու համար, մեծ խուճապ մը չեն ցոյց տար կռիւին վայրը փութալու . իսկ ինք, Անանիոսի խմբագրապետը, հանգիստաւորապէս կը խոստանայ . . . Ռիւ Հա Պրիւյէրէն « ծա-փա-հա-րե՛լ » կռուողները : Շատ վսեմ եւ քաջարի գաղափար մըն է ասիկա արդարեւ , որ անշուշտ իր քաղմաթիւ հետեւողները պիտի ունենայ կրակոտ այլ անշարժ յեղափոխանէրներու կարգերուն մէջ մանաւանդ : Բայց կը զարմանանք թէ ինչո՞ւ համար Պ. Չօպանեան Հայ ազգին մեծ բանաստեղծ մը, մեծ արուեստագէտ մը , մեծ բժիշկ մը , մեծ քննադատ մը, ու վերջ ի վերջոյ մեծ քաղաքագէտ մը սալէ յետոյ, կը զլանայ մեծ հերոս մըն ալ շնորհելու անոր : Այս բնական հարցումը այնչափ աւելի շփոթութեան մէջ կը ձգէր մեղի որչափ կը մտածէինք թէ իր դիւանագիտական հանձարը այլ եւս իր դերը կատարած լինելոցած էր Բարբիլի մէջ , Տէլքասէ , շնորհիւ իրեն, շահուած էր հայկական դատին ու պիտի բաւէր որ քիչ մը կռուէինք որպէս զի Նոյեմբեր 15ին ապամովապէս փրկուէինք : Ինչո՞ւ համար ուրեմն, քաջն Արշակ զօրավար, ձերմակ ձիու մը վրայ , խարսեայ խոպոպները հովին ու աջ ձեռքի սուրը զէպի թշնամի բանակը սպառնազին կրկաւրած , չէր ուզեր Հայ ազգը քառասմբակ առաջնորդել կռիւին ու յաղթանակին . . . :

Այս ցնորատու պատկերին կրազանքին յափշտակութեանը մէջ թաղուած էինք կրբ անխիղճ բարեկամ մը առեղծուածին մեկնութիւնը գտաւ յանկարծ , յաւիտենական յուսահատութեան մը մէջ ընկղմելով մեզի անզթօրէն : Պ. Գալփաքճեանի զէմ բացած դատէն ի վեր գիտնալու էիք որ, ըսաւ, Պ. Չօպանեան այնքան հմուտ է օրէնսգիտութեան որչափ բժշկութեան, ոչ մէկ օրէնք իրեն համար գաղտնիք ունի , ըլլայ գատական , պետական թէ գինուորական : Արդ գինուորական օրէնքի հիմնական արամագրութիւն մը ամէն գինուորի համար 1 մէթր եւ 54 սանթիմէթր հասակ հարկաւոր « կը կա-

ցուցանէ » , եւ որովհետեւ Անահիթի մեծ խմբագրապետը 1 մէթր 53 ու կէս հասակ մը միայն կը արամազդէ , ինքզինքը անյարմար կը նկատէ յեղափոխական բանակին զինուորագրուելու : Ահա ինչո՛ւ համար պիտի չունենանք , աւա՛ղ , մեր քաջն Արշակ զօրավարը :

ՆՈՅՆ ԵՍՍԻՆ ՎՐԱՅ ՈՒՐԻՇ ԵՂԱՆԱԿ .

Պ. Ա. Զօպանեան արիւն—արցունք կը թափէ իր գեղարուեստական Անահիթին փէշերուն մէջ՝ չկարենալ երթալուն Հայաստան հերոսաբար կռուելու եւ մեռնելու : Յոգնաջան հրապակագիրը , ինչպէս գիտեն իջ թէրթին վրայ քուններն տանող իր բազմաթիւ բաժանորդները , ասենէ մը ի վեր զբաղած է երջանիկ հայ ազգին ծանօթացնելու յունական գեղարուեստը՝ թարգմանածոյ հատուածներով Իրոլիա Թէնի հոյակապ գործէն , — թարգմանութիւններ որոնց կատարելութիւնը կը մոռցնէ այդ էջերուն Թէնէ մը գրուած ըլլալը : Ու ասիկա , այս անմիջական , անհրաժեշտ գործն է որ կը կաշկանդէ կորզինքը հոս , մինչ իր վեհանձն մտածումը սաւառնաթիւ ու սպառնազին կը թռչի եփրատի հովիտը :

Մեծ քաղաքագէտ—հմանասէրին մէջ հոմերական մարտիկի մը այս յեղակարծ զարթնումը հիացումով կը լեցնէ մեզ , ու մեր աչքերը իրեն կը դառնան յոյսով ու դուրգուրանքով : Հիմակ որ անմոռանալի ձիւանկիւր ասպարէզէն մեկուսացած է , մինակ ինքը կայ որ ամէն պայման կը միացնէ իր վրայ՝ արժանաւորապէս անոր տեղը բռնելու , — միեւնոյն կրակոտ հոգին , միեւնոյն առատարուզիս պերճախօսութիւնը , ու միեւնոյն կուտակումը մէկ յօդուածի մէջ բոլոր կարելի հակասութիւններուն :

Հայ Արիւլէսը որ մասաւոր գինովութեան օր մը Ֆրանսական մարտանաւը շարժեց տարաւ Մէրսին , իր կիկլոպի առաջին հարուածը կուտայ ժողովուրդին Հանաւրին , որուն անյոյս խոհեմութիւնը անհանդուրժելի է իր բողջուռնչ , հայրենանուէր հոգիին : « Պէտք է կռուիլ » կ'ըսէ , ու իր մարտագոտ հրաւերը կ'աւարտէ միսթիւրակոն խոնարհութեամբ մը . — Պէտք է մանաւանդ

խոհեմ ըլլալ, պէտք է մանաւանդ խորամանկ ըլլալ օձի պէս :

Հերոս մըն է Պ. Զօպանեան, Հակասութեանց հերոսը :

ԹԻԻՌ ԱՆ ԿԱՐՃԱՀԱՍՍԱԿ ԷՐ .

Ներդասական թերթերը արդէն ծանուցին թէ Բարիզի Հայոց հոգեւոր հովիւը Ֆրանսայի արտաքին գործերու նախարարին ներկայացաւ ընկերակցութեամբ Պ. Մինայ Չերազի Հայկական դատին համար : Հոգեւոր հովիւը անուղղակի հրաւէր ստանալուն՝ անմիջապէս Պ. Չերազի ընկերակցութիւնը խնդրած էր հապճեպին մէջ չմտաբերելով Ուրիշի մը Բարիզ գոյութիւնը : Հովիւը գոն սրտով իր բնակարանը դառնալուն երբ իր սենեակին դուռը պիտի բանար, լեղապատառ կը մնայ խորոտահնչակ գոռումէ մը .

— Հաւնեցա՞ք :

— Գոն կը դառնամ . . . հաւնեցայ :

— Ես չհաւնեցայ եւ գոն չեմ . . . Ի՞նչպէս անոր հետ երթալ քանի որ ես կամ :

Հովիւը աճապարանքով սենեակին դուռը կը բանայ ու Պ. Զօպանեանի հետ ներս կը մտնայ .

— Հիմա, որդեակ, ի՞նչ կ'ուզես, ի՞նչ կայ, ի՞նչ եղար . . . չուրխանա՞ս որ Պ. Տէլքասէն մեզի ընդունեց եւ այնչա՛փ գեղեցիկ յոյսեր տուաւ :

— Յոյսը գլուխնիդ փարատի . . . մուխս մարեցիք, հիմա ի՞նչ պիտի ըսեմ թրանսիլվանիոյ Հայոց, Բարիզ եկող Բաքուցիներուն, Անանիսի բաժանորդներուն . . . Ե՛ս եմ այստեղի Հայոց քաղաքական ներկայացուցիչը թէ ա՛ն, ա՛ն, ա՛ն, ա՛ն խաբերան :

Աւելորդ է պատմել ամբողջ այս բորբոքեալ խօսակցութիւնը : Ընթերցողը արդէն գուշակեց թէ Պ. Զօպանեան եկած էր իր իրաւունքին յափշտակմանը համար բողոքելու բայց եղածը եղած էր :

Հովիւը չուզելով կոտրել խեղճ տղան, ինքնարզաբացման բոլոր փաստերէն յետոյ կ'ըսէ .

— Ի՞նչ ընեմ, որդեակ, առած մը կայ կ'ըսէ. «Խօսքը մեծին», ան քենէ մեծ էր, ան առի :

— Ինչո՞վ մեծ էր, խելքո՞վը :

Հոգեւոր հովիւը պատասխանատուութիւնը բնութեան վրայ ձգել ուզելով՝

— Ձէ՛, որդեակ, հասակովը . . . աղէկ կ'ըլլար որ Տէլքասէն պոյը պօսը տեղը հայ մը տեսնէր :

Պ. Չօպանեան բարկացայտ նայելով խօսակցին երեսը.

— Ի՞նչ, ան ինչ աւելի մե՞ծ է հասակով, աւելի գեղադիտա՞կ է :

Հովիւը աչքովը Պ. Չօպանեանը գլխէն ոտքը չափելով չափչփելով՝

— Որդեակ, ինծի անանկ կուգայ որ անիկա քուկին մէկուկէսդ է :

Բողոքարկուն վսեմ լռութեամբ գրպանէն կը հանէ մատուցքի պէս պահուած դեղնաշորթ թուղթ մը եւ կը կարգայ ու կը թարգմանէ .

— « Գեղադիտակն Պ. Չօպանեան . . . » լսեցի՞ք :

— Օրհնած ինծի անանկ կուգայ որ ատ լրագիրը սա կիւլիվէրի ճամբորդութեան մէջ նկարագրուած լիւլիւրապիկներուն աշխարհին մէջ կը հրատարակուի : Ի՞նչ կ'ըսես :

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

« Իրօչակ »ի օգոստոսի թիւէն .

« Սուլթան Համիտի թագաւորութիւնը կը նմանի թքամանի մը, ուր միշտ պէտք է թքնել : »

Կարելի՞ է արդեօք ուրիշ բան մը ընել թքամանի մը մէջ քան եթէ . . . թքնել :

Անցնինք :

Այդ թքամանին մէջ, կը շարունակէ գրողը, « ոչ մէկ մաքրութիւն (?) կայ, ոչ մէկ սրբութիւն (?), անվերջ գողանութիւն (??), անծայրածիր թշուառութիւն (???) անուելի անառականոց մը (????) : »

Թքաման մը, որ շատ մը բաներու հետ միանգամայն անառականոց մըն է . . . :

Քիչ մը աւելի վար, Սուլթանին ակնարկելով .

« Մարդ մը, գողահար շան մը պէս ծակը մտած կը մլաւէ : »

Ի՞նչ կ'ըսէք այդ մարդ-չուն-կատուին :
Տարվինակ քննութի՞ւնն ալ պիտի յեղափոխեն այս
մարդիկը :

ԳՐԱԿԱՆ « ԲԱՆԱՅԻՐ ».

Բարի լուր մը մեր կովկասի եղբայրներուն :

Զմայլելի ներդաշնակութիւն մը կայ մարդկային քա-
ղաքակրթութեան ընթացքին մէջ : Մինչև վերջին ժա-
մանակները , վաճառականները իրենց սպարանքները ,
— երբեմն ա՛յնչափ աղուոր , յակինթ , կնդրուկ եւ
հալուէ՛ նուազաւոր նաւերու մէջ , երանութեան ծովե-
րու վրայ — տեղէ տեղ կը փոխադրէին , ծախելու հա-
մար զանոնք արեւոտ տօնավաճառներու մէջ :

Վաղնչական դարերու այդ գեղեցկութիւնը պիտի
իրագործուի , փա՛ռք տանք աստուածներուն , գրակա-
նութեան մէջ ալ :

Պ. Հախումեան , իմացաք հարկաւ , Բարիզի մէջ
հրատարակեց ժառանգակ անունով թերթ մը , որ բովան-
դակ տպագրական գեղեցկութիւնը ունի չկարգացուելու
սահմանուած գործերուն : Արդ , կը լսենք թէ քրտնա-
վատտակ հրապարակազիրը , հիանալի կորովամոռ-
թեամբ մը հասկցած թէ Եւրոպան , Ափրիկէն ու Ամե-
րիկան միացած՝ հատ մը գնող իսկ պիտի չտան իրեն
թերթին , խոչոր հակ մը ըրած է իր ժառանգակներուն
հաւատարիմ յաւիտենութիւնը , ու կովկաս չուած է՝
սպառելու համար զանոնք գրական քանայիտի մը մէջ
զոր պիտի սարքէ հոն : Ըտողներ կան որ եթէ կովկաս
ալ չյաջողի , Նիժնի-Նովկորոտ պիտի երթայ՝ յառաջի-
կայ տօնավաճառին , իր գրականութեան փայլուն ու
ողորկ թողլթը ծախելու համար գոնէ Օսգիաքներուն ,
Իալմուկներուն , Բըրկըզներուն , Լարոններուն , եւ ,
ո՛վ գիտէ , թերե՛ւս իսկ Նաքիմացիներուն :

Մեր կարեկից մաղթանքները :

ՆԱԿԱՃԱՇԱԿ ՄԸ.

Կ'երեւնայ որ Պ. Արշակ Չօպանեան , որուն վառօ-

գանից) արտաշնչութիւնները հոտոտեցինք « Գրական եւ Գեղարտեստական » (ինչո՞ւ կը խնդար, քանի որ այդպէս գրուած է Անանիսին գլուխը) հանգէսին մէջ, արդէն ճակատամարտի մը հանդիսատես եղիք է քանի մը օր առաջ, Բլաս Կլիշի, սրճարանի մը մէջ :

Հոն, ամուր սեղանի մը ջուրջը բանակած են Արշակ կունդասապլ եւ իր սպանակոյտը՝ ստուգելու համար թէ Պ. Երուանդ Մանուէլեան իրա՞ւ աննպաստ խօսքերը բաժն է Տոքթ. Ս . . . ին Պ. Արշակ Չօպանեանի նկատմամբ: Պ. Երուանդ Մանուէլեան ուրացեր է իրեն վերագրուած ոճերը: Ասոր վրայ պատերազմի նշանը տրուել է, եւ Տոքթ. Ս . . . աջ թեւը անաջ մղելով աւանդական հինգ եղբայրներու առաջնորդութեամբ՝ յարձակուած մը գործեր է Անանիսի մեռնաշորհեալ քիւժապարհին ձախ այտին վրայ: Պ. Մանուէլեան կանոնաւոր նահանջով մը կրցիր է խուսափել թշնամիին մէկ նոր յարձակումէն:

Պ. Չօպանեան, իր ուխտին հաւատարիմ, քաջաբար « ծափահարեր » է կուռողները:

Կուռին տաք միջոցին երկու գաւաթի ոտք ջախջախուելը ու ջուրի շէշի մը գլուխը վիրաւորուելը է (այս վերջինը ծանրապէս):

Այլ ժամանակը չէ՞ այս խաղըութիւններուն վերջ տալու:

Ի՞նչ եղև Ա.Ի.

Շատ կողմերէ մեզի կը հարցնեն թէ ի՞նչ եղաւ « Հայկական Միութիւնը », որուն կազմութիւնը ա՛յնչափ թմբկահար տոնահարութեամբ ծանուց « Անահիտ »: Արդեօք սկսա՞ւ գործադրել այն հսկայ ծրարչիւնները որոնց ուրուսագիծը վարպետի ձեռքով չողացուց մեր չլմորած աչքերուն Միութեան քարտուղարը:

Վեցամսեայ սպանումէ մը ետքը տարօրինակ չենք գտներ հետաքրքիրներու այս հարցումը, բայց պատասխանելու համար քիչ մը շփոթած ենք:

Իբրև խղճամիտ օրագրող՝ ըսենք սակայն մեր գիտցածը:

Միութեան անդամներէն Պ. Թամամչէֆ Բարիզ վերադարձած է ջուրերէն, ուր կը գտնուէր ամբաներէ ի

վեր, առանց կարող ըլլալու նուագեցնել իր փորին ծաւալը որ մինչեւ հիմակ Հայկական Միութեան մէջ միակ աչքի զարնելիք բանն է արդարեւ :

Պ. 'Լամբարօֆ' խմբին բրոֆեսորը , կամ Բարիզ է կամ Բարիզ չէ , ինք ալ օգտփոխութեան գացած ըլլալով Պատուոյ Ատեանէն ետքը , որուն համաուաւոր վճիռը , ինչպէս ոմանց , իր ալ մարտդութիւնը խանգարած էր :

Պ. Իսկէնտէր եւ Պ. Փեհլիվանեան միշտ Միութեան մէջն են եւ միշտ մէջէն ելլելու ճարը կը փնտոեն , իսկ Քելէկեան իրան . . . աժան անթիֆա կը փնտոէ :

Պ. Թրնկըր չենք գիտեր ի՞նչ կ'ընէ , հաւանական է որ բան մը չ'ընեք :

Իսկ Զօպանեան . . . բայց ի՞նչ չընեք այդ տղան :

Մ Ի Շ Տ Ա Ռ Ա Ջ Ի Ն .

Հետզհետէ աւելի եւս խեղարուեստական «Անահիտ»ի խմբագրապետը դատ պիտի բանայ եղեր Պ. Մ. Գալփաքեանի գէմ , սպիացնելու համար իր պատիւը զոր վերաւորեալ կը նկատէ անճառելի Պատուոյ Ատեանին վճռէն ու Բարիզի Գաղթականային ժողովէն ի վեր :

Այս վերարժական գործողութիւնը պիտի կրնա՞յ բուժել խեղճին պատիւին խոցը : Բժիշկը որ վերջերս ա՛յնքան հեղինակաւոր կերպով երեւան եկաւ Պ. Արշակ Զօպանեանի բիւրատարր ու գետնաօրեծային էութեան մէջ , կրնայ գուցէ պատասխանել այս հարցումին :

Գալով մեզի , մենք անկեղծօրէն ու խորապէս կը ցաւինք որ «Անահիտ»ի խմբագիրը չի վարանիր օտարներու առջեւ բանալու ամօթի ու աղտոտութեան այդ ծրարը , որ անշուշտ լաւագոյն գաղափարը չէ որ պիտի տայ մեր մասին՝ մեզ հիւրընկալող երկրին դատաւորներուն :

Բայց այս մտահոգութիւնը ո՞րչափ ետքը կուգայ սա միւս մտահոգութենէն որ յարաժամ կը լլկէ «Անահիտ»ի խմբագրին միտքը .

— Նորէն ինքն է որ առաջին անգամ հայկական ներքին կոբններն ու կեղտոտութիւնները ֆրանսական

դատարանին ներկայացնելու «պատիւը» պիտի ունենայ :
Մե՛ծ պատիւ, շիտակը :

ԱԿԱՄԱՅ ԲԱՌԱՆԱՂ.

Պոլէն նոր Բարիզ հասած վաճառական մը որ ֆրանսերէնի անտեղեակ է, կարդալով Մեծ-Իսթէրիքի ինքնամկրտութիւնը, միամտաբար ըսած է .

— Աֆէրիմ աղայ, ի՛նչ շիտակ կը խօսի . գալէս ի վեր ուրիշ բան լսած չունիմ բայց եթէ խրքերիք, խրքերիք. կ'ուզե՛ն, կ'ուզե՛ն . բայց ասոնց մէջ մեծը ո՞րն է, պզտիկը ո՞րն է, ան չտեսայ :

ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ . . . ԵԹէ Կ'ՈՒՁԷՔ,

Փուչէ խարազաններու եւ հրավառ կասկարաններու կը սպասէինք եւ առ այժմ մրտենիէ պսակներով կ'ողջունեն կոր մեզիք : Պարտք կը զգանք նախ շնորհակալութիւն յայտնել Մշակի որ մեր համեստութիւնը կարեւեր խոցող տողերէ հարք, մեր առաջին թիւի յօդուածներէն մին արտատպած էր . յետոյ Փողոզուրդիկն Հաւնարին, Արևեհիսային, Բազմալիսային, Հայեղիին, Ծարշուղին եւ ուրիշ թերթերու որոնք համակրական տողերով ծանուցած էին Ազատ Խօսքին երեւումը : Չմոռնանք նաև Անահիտ որ իր խոհեմ ու պերճախօս լուսթեամբ, — ո՛հ որքան, — հաճած էր իր թանկագին հաւանութիւնը տալու մեր զրամներուն :

Պ. Մինաս Չերազ փորձած էր միայն, իր անպարագրելի թերթին մէջ, չար ըլլալ մեզի համար, մեր թերթին անունը փոխելով «Ազատ խոցք»ի : Անկեղծօրէն խօսելով՝ չհրազական բառախաղը մեզի չվիրաւորեց . միայն թէ, Աստուած իմ, որչա՛փ գո՞ պիտի ըլլայինք եթէ մեր ընդդիմախօսները քիչ մը աւելի esprits ունենային :

Շնորհակալութիւն նաև մեր Ամերիկայի, Կովկասի, Պուլկարիոյ, Եգիպտոսի, Յունաստանի եւ Ռուսմանիոյ ծանօթ ու անծանօթ բարեկամներուն որոնք նամակնե-

րով շնորհաւորած են մեր ձեռնարկը, գրիթէ սպասուած Մեհաբայի մը դերը տալով մեզի . կը մերժենք այդ դերը, ընդունելով միայն շնորհաւորութիւնները :

Շնորհակալութեան մասնաւոր գլխահակում մը պարտաւոր ենք ընելու նաև Բարիզի հայ գաղութին որ այնքա՛ն ջերմօրէն ողջունեց մեր թերթը . . . միաձայնութեամբ , պիտի ըսէինք , եթէ իմացած չըլլայինք որ մէկը միայն հայրոջանքներու տարափով մը պատշաճ գատեր է յայտնել իր կարծիքը Ազատ Խօսքի մասին : Աննշուշտ պիտի փափաքէինք որ, բարեկրթութեան սիրոյն համար գոնէ , աւելի մարդավար ձևով մը բանաձևէք իր քննադատականը մեզի նկատմամբ , բայց կ'իշխուայ որ անկարելի է այդ բանը մեր ակնարկած անձին համար որ ամենաչնչին միջադէպի մը առթիւ իր կինը յաճախ ծեծելու չափ առաջ տարած է եղեր իր ասիացիի կողմութիւնը :

Մենք, ասպետական ոգիով բռնկած՝ նոյն իսկ վառուած՝ (ինչո՞ւ չըսենք) անձեր, կ'արհամարհենք իր կինը ծեծող մեկու մը կողմէ՛ մեզի ուղղուած հայրոջանքները . նոյն իսկ եթէ այդ մէկը Ռոյալիսի դրամատան դիմացը սարափուքիւն ընէ ու Հայկական ծիծաղաշարք Միութեան անդամ ըլլայ :

«Ա.ՉԱՏ ԽՕՄԻ»Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .

Ազատ Խօսքի պարբերական հրատարակութիւն մը պիտի ըլլայ սարին առ նուազն 12 թիով , բայց հաւանական է որ այդ թիւն մէջ չափանափակուի մեր հրատարակութիւնը , հետեւաբար որոճած ենք բաժանորդագրութիւնը թիւի վրայ ընել :

1. թիւի բաժնեգինն է Եւրոպայի եւ Ռուսիայի համար 5 ֆր. իսկ Ամերիկայի համար 8 ֆր. : Բաժնեգինը կանխիկ է :

Ազատ Խօսքի մէկ թիւն գինն է 50 սանթիմ :
Մեր հասցեն է

M. PERRIER (Pour AZAD KHOSK)
4, rue des Guillemites l'ARIS (IV^{me})

Le Gérant : H. CHOTARD.

Imp. D. DIKRAN. — 15, Boulevard Arago, PARIS.